ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը Մարտի 8-ի կապակցությամբ

Սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ տարվա ամենագեղեցիկ ու գարնանային տոնի կապակցությամբ: Ամենեւին պատահական չէ, որ գարնան գալուստը, բնության զարթոնքն ու ծաղկունքը սկսվում են այս խորհրդանշական տոնով, քանզի դուք ձեր մեջ ամփոփում եք գեղեցկությունն ու հմայքը, անսպառ բարությունն ու լավատեսությունը:

Մեր ժողովրդի պատմության բոլոր ժամանակներում մշտապես մեծ է եղել ձեր դերակատարումը մեր հաղթանակների, ձեռքբերումների ու նվաճումների գործում: Ձեր հայրենասիրությամբ ու մարդասիրությամբ, ձեր բարեխիղճ աշխատանքով, հարազատ տունը, քաղաքն ու երկիրը ավելի լավը դարձնելու ազնիվ մղումներով ալսօր էլ դուք շարունակում եք մեր հասարակության եւ ընտանիքների հուսալի հենասյունը լինել:

Սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր, մեկ անգամ ևս շնորհավորելով տոնի առթիվ՝ քաջառողջություն եմ մաղթում բոլորիդ: Թող սերն ու հմայքն անպակաս լինեն ձեզանից: Թո՛ղ գարունները միշտ խաղաղ լինեն, եւ հայ կնոջ աչքերը մշտապես փայլեն երջանկությունից: